ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ

1975 թ. սեպտեմբերի 23-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ հանդիսավոր ժողովը՝ նվիրված ակադեմիային ժողովուրդների բարեկամության շքանշանի հանձնմանը։

Նախագահությունում էին ընկ. ընկ. Պ. Պ. Աֆիսիմովը, Գ. Ա. Արզումանյանը, Կ. Ս. Դեմիրճյանը, Վ. Բ. Ղալումյանը, Լ. Պ. Ղարիբջանյանը, Հ. Մ. Ոսկանյանը, Մ. Բ. Արզումանյանը, Ն. Վ. Թարջումանյանը։

Հանդիսավոր ժողովը մերածական խոսքով բացեց Գ. Ա. Արզումանյանը, որը հայ գիտնականներին ի սրտե շնորհավորեց կառավարական բարձր պարգևի առթիվ և նրանց ցանկացավ ստեղծագործական հետագա հաջողություններ։

Ժողովի պատվավոր նախագահություն ընտրվեց ՍՄԿԿ Կենտկոմի Քաղբյուրոն Լ. Ի. Բրեժնևի գլխավորությամբ։

Զայնը տրվեց ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Կ. Ս. Դեմիրճյանին։— Այսօր մենք հավաքվել ենք այս դահլիճում համաժողովրդական ճանաչման տուրք տալու սովետական գիտնականների փառապանծ կոհորտաներից մեկին, որն իր արժանի ավանդն է մուծել հայրենական գիտության զարգացման գործում,— ասաց նա։ Ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը նշեց, որ մեր հանրապետության կազմավորումն ու զարգացումը, նրա սոցիալիստական վերակերտման հրաշքը որ մեր մեծ կուսակցության լենինյան իմաստուն ազգային քաղաքականության վառ օրինակն է, ցայտուն կերպով երևում է Սովետական Հայաստանում գիտության և տեխնիկայի բուռն զարգացման փաստով։ Սոցիալիստական Հայաստանի գոյության առաջին իսկ օրերից մեր լենինյան կուսակցությունը հսկայական ուշադրություն էր նվիրում հանրապետությունում գիտության զարգացմանը, գիտատեխնիկական բարձրորակ կադրերի պատրաստմանը։ Այդ գործում անգնահատելի դեր խաղացին Ռուսաստանի, Մոսկվայի և Լենինգրադի գիտնականներն ու ուսումնական հաստատությունները, որոնք կատարելով իրենց ինտերնացիոնալ պարտքը, Հայաստանի երիտասարդ գիտության համար պատրաստեցին գիտական աշխատողների մի ամբողջ համաստեղություն։ Հայրենական մեծ պատերազմի ահեղ տարիներին ՀՍՍՀ ԳԱ ստեղծումը նոր կարևորագույն փուլ եղավ հանրապետությունում գիտության զարգացման գործում, բոլոր պայմանները ստեղծեց նրա բուռն վերելքի համար։— Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն,— ասաց ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը,— բարձր է գնահատում այն, որ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան հենց սկզբից ձգտել է խելացիորեն և նպատակահարմար ձևով օգտագործել այդ պայմանները։

Այնուհետև նա հանգամանորեն կանգ առավ այն ակնառու հաջողությունների վրա, որ ձեռք է բերել հանրապետության գիտությունների ակադեմիան իր գոյության տարիներին, նշեց նրա աշխատանքներում տեղ գտած թերությունները ու վրիպումները և ցույց տվեց ՀՍՍՀ ԳԱ առաջ ծառացած խնդիրները։

— Թույլ տվեք, թանկագին ընկերներ,— վերջում նշեց ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը,— Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, հանրապետության Գերագույն սովետի նախագահության և Մինիստրների սովետի անունից, ձեր անունից, Սովետական Հայաստանի ժողովրդի անունից գիտությունների մեր ակադեմիային, Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներին և թղթակից-անդամներին, ակադեմիայի սիստեմի բոլոր աշխատողներին, ինչպես նաև բոլոր հայ գիտնականներին ջերմորեն և ի սրտե շնորհավորել կառավարական բարձր պարգևով պարգևատրվելու առթիվ և նրանց նորանոր հաջողություններ մաղթել իրենց ոլ դյուրին, բայց պատվավոր ու ազնիվ գործունեության մեջ, ցանկանալ առողջություն և երջանկություն անձնական կյանքում։

Այնուհետև Կ. Ս. Դեմիրճյանը հրապարակեց ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը՝ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին։ և շքանշանն ամրացրեց ՀՍՍՀ ԳԱ դրոշին։

ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի անունից հայ գիտնականներին շնորհավորեց ակադեմիկոս Ն. Ն. Բոգոլյուբովը: Ակադեմիային կառավարական պարգևի շնորհումը, ասաց նա, վկայում է թե կուսակցությունն ու կառավարությունն ինչպիսի բարձր գնահատական են տալիս Հայաստանի գիտնականների ձեռք բերած մեծ հաջողություններին։

Իր ողջույնի խոսքում գիտության բազմաթիվ բնագավառներում հայ գիտնականների ձեռք բերած հաջողություններին բարձր գնահատական տվեց Վրացական ՍՍՀ ԳԱ փոխ-պրեզիդենտ, ակադեմիկոս Ե. Կ. Խարաձեն:

Ադրբեջանական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի անունից ողջույնի խոսք ասաց ակադեմիկոս Մ. Ս. Կաշկայը: Նա հատկապես նշեց երկու եղբայրական հանրապետությունների գիտական կոլեկտիվների միշև անշեղորեն աճող ու ընդլայնվող կապերը, հայ գիտնականների մեծ վաստակը Ադրբեջանի ԳԱ Շամախիի աստղադիտարանի կազմակերպման գործում։

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հիմնակազմ անդամների անունից ելույթ ունեցավ ակադեմիկոս Հ. Խ. Բունիաթյանը: Նա ասաց, որ ակադեմիային Ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելը հանրապետության գիտնականներին պարտավորեցնում է աշխատել ավելի լավ, ավելի լայնորեն ծավալել տեսական և գործնական կարևոր պրոբլեմների հետազոտությունները։

Հանրապետության գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ն. Հ. Առաքելյանն ասաց, որ հայ գիտնականների երիտասարդ սերունդը անկեղծ երախտագիտությամբ է ընկալում այն հսկայական օգնությունը, որ հանրապետության գիտական կոլեկտիվներին մշտապես ցույց է տվել և շարունակում է ցույց տալ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան։

Հանդիսավոր ժողովում ողջույնի խոսքով հանդես եկան Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանի բանվոր, ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ Ն. Ա. Խլղաթյանը, Էջմիածնի շրջանի նորակերտ գյուղի սովխոզի դիրեկտոր Ս. Ե. Նազարյանը և Երևանի պետական համալսարանի ասպիրանտ Ա. Ս. Սողոմոնյանը:

Այնուհետև խոսքը տրվեց ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, սովետական խորագույն գիտնական, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանին:— Բառերով դժվար է հաղորդել այն հուզմունքն ու երախտագիտությունը, որ այսօր, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիային Ժողովուրդների բարեկամության շքանշան հանձնելու օրը, զգում է նրա կոլեկտիվը,— ասաց նա։— Մեր անսահման շնորհակալությունն ենք հայտնում ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեին, ՍՍՀՄ կառավարությանը՝ Հայաստանում և ամեն մի հանրապետությունում գիտության այս նոր խրախուսման համար։ Դա շատ բան է պարտավորեցնում գիտության աշխատողներին։ Մենք շնորհակալություն ենք հայտնում նաև Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմին և հանրապետության կառավարությանը, ակադեմիայի կարիքների նկատմամբ ցուցաբերած մշտական հոգատարության և ուշադրության համար։ Կարելի է վստահորեն պնդել, որ մեր ակադեմիայի կյանքի 32 տարում գիտնականների ձեռք բերած ամեն մի նվաճում պայմանավորված է եղել կուսակցության օգնությամբ, իրագործվել է նրա ցուցումների և խորհուրդների հիման վրա։ Իր ելույթի վերջում Վ. Հ. Համբարձումյանը հավաստիացրեց, որ ի պատասխան պատվավոր պարգևի, Հայաստանի գիտնականները պարտավորվում են «համառ աշխատանքով լուծել առաջադրված խնդիրները, արժանավայել դիմավորել հարազատ կուսակցության XXV համագումարը»։

Հանդիսավոր ժողովի մասնակիցներն ընդունեցին ողջույնի նամակ՝ ուղղված ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեին, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը և ՍՍՀՄ Մինիստրների սովետին։ Այն ընթերցեց ՀՍՍՀ ԳԱ փոխ-պրեզիդենտ, ակադեմիկոս Ա. Ռ. Հովհաննիսյանը: Ողջույնի նամակում Հայաստանի գիտնականների անունից հարազատ կոմունիստական կուսակցությանը և սովետական կառավարությանը խորին երախտագիտություն հայտնվեց բարձր պարգևի, գիտության զարգացման նկատմամբ ցուցաբերվող հսկայական ուշադրության և հոգատարության համար։

Հանդիսավոր ժողովի մասնակիցները հավաստիացրին, որ Սովետական Հայաստանի գիտնականներն արժանավայել կդիմավորեն ՍՄԿԿ XXV համագումարը, որը կսահմանի մեր հասարակության զարգացման նոր փուլը, կնշի սովետական գիտության առաջադիմության նոր հեռանկարներ։